

# ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս



Հրատարակութիւն  
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի  
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակի





## «Հայ Մանկավարժ»

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս  
լոյս կը տեսնէ տարին չորս անգամ

*Հայկական կրթական հաստատութիւններու եւ անոնց հովանաւոր  
մարմիններու պատասխանատուներուն, հայկական վարժարաններու  
ուսուցիչ-ուսուցչուհիներուն, դպրոցական հայագիտութեան խնդիր-  
ներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան եւ  
ծնողներու համար*

## Հրամանով

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ  
Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին

## Պատասխանատու Խմբագիր

Հայր Վարդան վրդ. Գազանձեան

## Խմբագիր

Եւա Գորէսեան

## Տնօրէն

Վարդան Թաշձեան

## Հրատարակիչ


Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի  
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակ  
«Ս.Գրիգոր Նարեկացի» Կեդրոն  
Հայ Կաթողիկէ Պատրիարքարան  
2078-5605 Ժեհթաուի Պէյրուպ-Լիբանան

Հեռ.: + 961 1 570559

Հեռատիպ: 961 1 570562

Էլ.հասցէ: [nareg@armeniancatholic.org](mailto:nareg@armeniancatholic.org)

[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)



# ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս

Հրատարակութիւն  
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի  
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման  
Գրասենեակի



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հրամանով Տանն Կիլիկիոյ Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակը կը ձեռնարկէ «Հայ Մանկավարժ» ուսումնագիտական եւ մանկավարժական եռամսեայ հանդէսի հրատարակութեան:

Բացառապէս հայերէն լեզուով լոյս ընծայուող սոյն հանդէսը ուղղուած է Հայկական կրթական հաստատութիւններու եւ զանոնք հովանաւորող մարմիններու պատասխանատուներուն, Հայկական վարժարաններուն մէջ պաշտօնավարող հայագիտական նիւթերու ուսուցիչ-ուսուցչուհիներուն, Հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթեր դասաւանդող մասնագէտներուն, Հայկական սփիւքի մէջ դպրոցական հայագիտութեան խնդիրներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան ու նաեւ հայ ծնողներուն:

«Հայ Մանկավարժ»ը, ըլլալով մէկը Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակի ծրագիրներէն եւ մեկնելով անոր հետապնդած նպատակներէն, կ'առաջադրէ, ուսումնագիտական մասով՝

- ԸՆԹԱՅՔ ՏԱԼ հայեցակարգային, ծրագրային եւ գործնական աշխատանքներու վերաբերող բոլոր կարգի քննարկումներու, որոնք կը վերաբերին դպրոցական հայագիտութեան խնդիրներուն,
- ՆՊԱՍՏԵԼ հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման ծրագիրներու քննարկման եւ կազմութեան եւ
- ՆՊԱՍՏԵԼ հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման ձեռնարկներու ստեղծման:

Մանկավարժական մասով, անիկա կ'առաջադրէ

- ՕԺԱՆԴԱԿԵԼ հայերէն լեզուի եւ հայագիտական այլ դասանիւթերու ուսուցիչ-ուսուցչուհիներու մանկավարժական գիտելիքներու զարգացման,
- ԸՆԹԱՅՔ ՏԱԼ դպրոցական հայագիտութեան եւ մանկավարժական գործունէութեան վերաբերեալ ուսուցիչներու քննարկումներուն՝ գիտելիքներու եւ փորձի փոխանակման համար եւ

- ՕժԱՆԴԱԿԵԼ հայկական վարժարաններու մէջ մանկավարժական գործի զարգացման:

Առ այդ, հանդէսը գլխաւորաբար պիտի բովանդակէ

- Հայեցակարգային եւ ուսումնասիրական յօդուածներ՝ մանկավարժական խնդիրներու եւ մանուկ-պատանիներու հոգեբանութեան վերաբերեալ,

- Հայեցակարգային եւ ուսումնասիրական յօդուածներ՝ դպրոցական հայագիտութեան խնդիրներուն, ուսուցման ծրագիրներուն եւ ձեռնարկներուն վերաբերեալ,


- Խմբագրական-համադրական յօդուածներ՝ հայ եւ միջազգային մանկավարժական մտքի պատմութեան եւ փորձին մասին,

- Թարգմանութիւններ՝ մանկավարժութեան հին թէ ժամանակակից դասականներէն, եւ

- Գրախօսականներ՝ դպրոցական հայագիտութեան եւ մանկավարժութեան վերաբերող հրատարակութիւններու:

«Հայ Մանկավարժ»ը բաց է բոլոր առաջարկներուն եւ աշխատութիւններուն առջեւ, որոնք ուղղուած են դպրոցական հայագիտութեան ուսումնասիրութեան եւ զարգացման, հայ վարժարաններու մէջ մանկավարժական գործի յառաջդիմութեան:

«Հայ Մանկավարժ» հանդէսի խմբագրութիւնը կը հրաւիրէ դպրոցական հայագիտութեան, մանկավարժութեան եւ մանուկներու հոգեբանութեան մասնագէտները, Հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցիչ-ուսուցչուհիները եւ հայ մտաւորականները՝ Սփիւռքի երկիրներէն եւ Հայաստանէն, մասնակցելու սոյն հանդէսին՝ որպէս յարաբերութեան միջավայր հայ մանկավարժական հանրութեան, ի խնդիր հայ մանկավարժութեան վերելքին եւ անոր բուն առարկային՝ հայ սերունդներու աճին ու զարգացման:



Շաղիկ Խիտավերտեան

## ՄԱՆՈՒԿ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ

Տիկին Շաղիկ Խիտավերտեան Մանկավարժութեան եւ Հոգեբանութեան դասախօս է Հայկազեան Համալսարանին մէջ, Պէյրութ, Լիբանան: Նոյն համալսարանի գործող ուսուցիչներու վերապատրաստման ծրագրին մէջ կը վարէ ուսուցողական աշխատանքային խումբի ղեկավարի պաշտօնը: Վկայեալ է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն (M.A. in Educational Psychology) եւ Հայկազեան համալսարանէն (B.A. in Education)





Մարդ անհատի կազմաւորումը կ'ընդգրկէ տարիներու ընթացքին անոր վարուելակերպին, մտածելակերպին, բարոյական հասկացողութեան, կարողութիւններուն եւ կարողականութիւններուն մէջ տեղի ունեցող քանակական եւ որակական փոփոխութիւնները:


Այս յօդուածը փորձ մըն է հակիրճ ձեւով անդրադառնալու մանուկ-պատանիներու ընկերային կազմաւորման եւ այս մարզէն ներս դպրոցի եւ ուսուցիչի ունեցած վճռորոշ դերակատարութեան:

Որեւէ դպրոցի կրթական-ակադեմական գործունէութիւնը կ'ունենայ լաւ որակ եւ առաւելագոյն արդիւնաւէտութիւն, երբ տուեալ միջավայրին մէջ նկատի կ'առնուին անհատին ամբողջական զարգացումը եւ զարկ կը տրուի անոր մտային, ֆիզիքական, բարոյական եւ ընկերային կազմաւորումին՝ հաւասարապէս:

Դպրոցական միջավայրերու մէջ, ընդհանրապէս, շեշտը կը դրուի առաւելաբար ակադեմական աշխատանքներու վրայ եւ երբեմն, անզգալաբար թէ ծրագրումի պակասի իբրեւ հետեւանք, կ'անտեսուին աշակերտի հոգեկան-ընկերային կազմաւորման բնագաւառը եւ այդ կազմաւորումին առողջ ընթացք ապահովելու սատարող վարժութիւնները, փորձառութիւններն ու աշխատանքները:

Ընկերային կազմաւորումը մանուկ-պատանիին կազմաւորման անհատական այն բաժինն է, որ կ'ընդգրկէ ներքին յատկանիշներ, անձի ընթնումի (self concept) զարգացում, անձնահաճութեան (self esteem) եւ ինքնարժեւորումի զգացումի կերտում, ինքնութեան ընկալում, ընկերային-մշակութային շրջանակի մը մաս կազմելու գիտակցութեան, զգացումներու կազմութիւն եւ արտայայտում:

Ընկերային կազմաւորումին մէջ մեծ դեր ունի ընտանիքը, որուն առողջ, անկեղծ եւ դաստիարակիչ մթնոլորտը կ'երաշխատէ մանուկ-պատանիին շրջապատի ընկերային յարմարեցման գործընթացը: Սակայն այս գործընթացին մէջ անժխտելի է դերը դպրոցին եւ ուսուցիչին, որոնք կ'օգնեն աշակերտին իւրացնելու իրենց մշակոյթին եւ շրջապատին յարմար, ընդունուած եւ բաղձալի վարուե-



լակերպ, հմտութիւններ, արժէքներ, համոզումներ եւ բարոյական չափանիշներ:

Հետեւաբար, ուսումնական որեւէ հաստատութիւն, իր որդեգրած կրթական ծրագիրներուն կողքին, ունի յստակ առաքելութիւն՝ ընկերութենէն ներս գործօն, անոր համար պատրաստուած եւ անոր կեանքին մասնակից անհատներ հասցնելու: Ընկերային կազմաւորման առողջ ու յաջող ընթացքը կը կազմէ հիմը հոգեկան առողջ պայմաններու ստեղծման եւ կ'օժանդակէ անհատի իմացական եւ զգացական հմտութիւններու զարգացման, որոնց շնորհիւ ալ անհատը պատրաստ կ'ըլլայ դիմագրաւելու եւ յաղթահարելու իր դէմ ցցուած դժուարութիւնները, հարցերը, անկիւնադարձային թէ տագնապալի հանգրուանները:

Ուսուցման չափ եւ ալ անելի կարելոր է վերոնշեալ ընկերային դաստիարակութիւնը: Եւ այս մէկը, ամփոփ կէտերու մէջ, կ'ընդգրկէ.-

ա- նկարագրի յատկանիշներու զարգացում, ինչպէս՝ համեստութիւն, արդարամտութիւն, ընկերասիրութիւն, պատասխանատուութեան գիտակցութիւն, խիզախութիւն, յարգանք, այլասիրութիւն, հանդուրժողականութիւն:

բ- անձնահատկութեան զգացումի կազմութիւն, որու միջոցաւ անհատը կը սորվի ընդունիլ եւ սիրել ինքզինք՝ իր բոլոր առաւելութիւններով եւ թերութիւններով: Այս զգացումին անմիջականօրէն կը կապուի ինքնաձանաչումի զգացումը, կարողութիւններու առարկայական արժեւորումը, ինչ որ կ'առաջնորդէ ինքնապատահութեան կերտումի:

գ- ինքնաղեկավարում, ինքնակարգապահութիւն եւ ինքնագուպում՝ կարենալ հակակշռելու համար ներքին մղումները, զգացումները, կամքը, բանաւոր թէ վարուելակերպային արտայայտութիւնները:

դ- բարոյական արժէքներու իւրացում, օրէնքներու, ձիշղի եւ սխալի տարբերութեան ընթրնում եւ վերլուծում:


Վերոյիշեալ կէտերը արձանագրուած են ընդհանուր գիծերու մէջ եւ հակիրճ ձեւով: Բնական է, որ անոնցմէ իւրաքանչիւրի մշակ-

ման համար հարկ է զանոնք մանրամասնել յաւելեալ բացատրութիւններով, կիրարկուած օրինակներով, ուսումնասիրութիւններու փաստարկումներով: Աշխատանք մը, որ այս յօդուածի սահմաններէն դուրս է առայժմ: Սակայն, հարկ է նշել նաեւ, որ վերոնշեալ յատկանիշներու զարգացման համար, դպրոց եւ ուսուցիչ միասնաբար պէտք է որդեգրեն յատուկ մանկավաժական մօտեցում, ծրագրեն եւ կիրարկեն յատուկ դրութիւն եւ մանաւանդ՝ դպրոցական ներքին յատուկ մթնոլորտ, որ կը յատկանշուի անկեղծութեամբ, սիրով, յարգանքով եւ շինիչ քննադատութեամբ:


Այս բոլոր սկզբունքներու գործնական արտայայտութեան համար, արեւմտեան, սկանտինաւեան եւ կարգ մը արաբական երկիրներ, արդէն իսկ մշակած են յատուկ ծրագիրներ, որոնք մանրամասնօրէն սերտուած են եւ կը կիրարկուին որեւէ այլ լեզուական, գիտական թէ պատմական դասանիւթերու վերաբերող ծրագիրներու լրջութեամբ եւ պատրաստութեամբ: Այդ երկիրներուն մէջ, ընկերային կազմաւորման «դասանիւթը» առօրեայ ներկայութիւն է աշակերտներու այլ դասապահերու շարքին: Իսկ կիրարկուած ծրագիրներու արդիւնաւէտութիւնը չափող ուսումնասիրութիւնները շատ խոստմնալից կը թուին ըլլալ, առողջ նկարագիր եւ հոգեկան հանգիստ պայմաններ ձեռք բերելու իմաստով:

Նետեալբար, հարկ է անյապաղ մտածել լիբանանահայ դպրոցներու կրթական ծրագիրներուն մէջ ընկերային կազմաւորման վերաբերող ծրագիրներու ընդգրկումին մասին: Ծրագիր՝ յատուկ թեմաներով, դասերով, գործնական աշխատանքներով, արժեւորման եղանակներով, յստակ դասացուցակով: Պէտք չէ բաւարարուիլ պատահականօրէն կամ կարգ մը առիթներու խելացի օգտագործումին ընդմէջէն փոխանցուած տեղեկութիւններով, բարոյախօսական խրատներով եւ ընդհանուր քննարկումներով, որոնց արդիւնաւէտութիւնը երբեք կարելի չէ առարկայականօրէն չափել կամ նոյնիսկ երաշխաւորել:

Եթէ կը հաւատանք, որ աշակերտներու միտքի զարգացման, լեզուներու լաւ տիրապետումին եւ կամ թուաբանական ամբողջական գիտելիքներու իրացումին համար պէտք է կիրարկել կրթա-



կան ծրագիրներ՝ 12-14 տարիներու վրայ երկարող, ապա նաեւ նոյն տրամաբանութեամբ պէտք է ընդունինք, որ ընկերային դաստիարակութիւնն ալ տեղի կ'ունենայ յատուկ, հետետողական եւ յարատետող ծրագիրներու ընդմէջէն: Ծրագիրներ, որոնք կ'ուսումնասիրուին, կը փորձարկուին եւ ապա կը կիրարկուին յստակ նպատակ ունենալով հայ աշակերտին բազմակողմանի զարգացումն ու իբրեւ հայ ու իբրեւ մարդ յաջող կեանք մը վարելու պայմաններու ստեղծումը:



Վերա Սիսեռեան

ԲՈՒՆԱԴԱՏՈՒՄԸ

Տիկին Վերա Սիսեռեան Հայկազեան համալսարանէն վկայեալ է Բուժական Հոգեբանութեան (M. S. in Clinical Psychology) եւ Քաղաքական Գիտութեանց (B.A. in Political Sciences) ծիւղերուն մէջ: Աշխատակցած է հայկական մամուլին եւ ունի բազմաթիւ յօդուածներ՝ տարբեր նիւթերու շուրջ: Ծառայած է հայկական մանկապարտէզի մէջ, իբրեւ հոգեբան: Հեղինակ է մանկական գիրքերու:



## Նախաբան

Դպրոցական կեանքը բոլորած որեւէ անհատ, հաւանաբար յիշէ իր դասարանին մէջ դասընկեր մը, որ դժուար կը կարդար, կամ անդադար կը շարժէր, կամ կը դժուարանար գրելու: Նոյն ծիրէն ներս, դժուար թէ մոռացութեան մատնուի բոլորին ծիծաղի առարկայ խեղճացած այն դասընկերը, որուն օգնութեան գրեթէ անկարող էր հասնիլ ուրիշ այլ անհատ՝ հաւանաբար ինք եւս գտնուելով նոյն սարսափին մէջ, որուն ենթակայ էր ծիծաղի, վարկաբեկման, քաջքշուքի եւ երբեմն ծեծի ենթակայ այդ խեղճ փոքրիկը, դաժան եւ «հսկայ» բռնադատողին դիմաց:

Մեր դպրոցական իրականութեան մէջ, վերոնշեալ բոլոր երեւոյթները առօրեայ պատկերներ են, շատ յաճախ իբրեւ կեանքին մաս կազմող բնական երեւոյթներ, որոնք բնական չեն եւ կրնան այնքան ասեղ գործել, որ անվերադարձ հետքեր ձգեն անհատին կեանքին, գործունէութեան եւ նկարագրին վրայ, ունենալով համապատասխան հետեւանքներ:

Դժբախտութիւնը այն է, որ յաճախ դպրոցական տարիները եւ հետագային կեանքի ընթացքին յայտնաբերուած դժուարութիւնները այնքան հեռու կ'ըլլան իրարմէ, որ գրեթէ ոչ ոքի մտքէն կ'անցնի թէ այսօրուան դժբախտութիւնները նոյն անձի կեանքին մէջ կապ ունին անցեալին պատահած դէպքերու հետ: Ինչու՞ այս հարցի հանդէպ նման մօտեցում:

1. Յաճախ դպրոցին մէջ պատահած այս դէպքերը, աշակերտին ճախողութիւնները կը նկատուին՝ իբրեւ բնական երեւոյթներ, հետեւաբար չենք ձգտիր անոնց լուծման: Օրինակ, եթէ աշակերտ մը լաւ չկարենայ կարդալ կամ լաւ արդիւնքներ ձեռք չբերէ, մեր մտքին մէջ հաստատուած օրէնքին համաձայն, կ'ընդունինք որ կեանքի մէջ կան մարդիկ, որ կրնան դպրոց երթալ եւ կան ուրիշներ, որոնք դպրոցի համար յարմար չեն. եւ վերջ՝ հարցը կը փակուի: Նոյն տրամաբանութեամբ, մեզի համար շատ բնական է տեսնել մեր աչքին առջեւ օրական քաջքշուքի եւ նեղութեան ենթարկուող դպրոցական մը իր դասընկերներուն կողմէ: Իբրեւ փոքրեր, չենք միջամտեր երբեմն վախնալով, եւ իբրեւ մեծեր



կ'ըսենք որ կեանքի մէջ միշտ կը պատահին նման դէպքեր եւ երբ մեծնան կը մոռնան: Փաստօրէն երբ մեծնան կրնայ ըլլալ որ դէպքը մոռնան կամ չմոռնան, սակայն դէպքին ձգած վէրքը այնքան խոր կ'ըլլայ, որ չի գոցուիր եւ պատճառ կրնայ դառնալ այլ վէրքերու:

2. Յաճախ կ'անդրադառնանք, որ փոքրիկը դժուարութիւն ունի, սակայն չենք գիտեր թէ ինչ պիտի ընենք, որպէսզի սրբագրենք զայն:

3. Կրնայ նաեւ պատահիլ, որ անդրադառնանք եւ գտնենք ձեւերը՝ օգտակար հանդիսանալու համար դժուարութեան մէջ եղող անհատին, սակայն հետետողական ձեւով չկարենանք հետապնդել հարցը եւ լուծումը ձգենք կիսատ:

Ուրեմն առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ, որ հարց մը գոյութիւն ունի. երկրորդ, լուծումներ գտնենք հարցին եւ երրորդ պէտք է հարցի հետապնդումը կատարենք եւ մինչեւ հարցի վերջնական լուծումը:

Այս ծիրէն ներս, հետաքրքրական պատմուածք մը ճիշդ ձեւով կը բացատրէ մեր արտայայտած մտքերը:

Դպրոցի մը բակը կը նայէր խորունկ ձորի մը վրայ: Օր մը, այդ դպրոցի շրջապատին մէջ գտնուող ծնողները կը հաւաքուին, որպէսզի մտածեն թէ ինչպէ՞ս կրնան պաշտպանել իրենց փոքրիկները եւ զանազան առաջարկներ կը կատարեն: Ծնող մը կ'առաջարկէ միշտ պատրաստ ունենալ հիւանդատար կառքեր, որպէսզի ձոր ինկող երեխան անմիջապէս փոխադրուէր հիւանդանոց: Ուրիշ մը կ'առաջարկէ հիւանդանոցի շտապ օգնութեան բաժինը զարգացնել եւ երրորդ մը կ'ուզէ աւելցնել բակի մէջ հսկողներու թիւը: Գիւղին իմաստուն մարդը կը լսէ բոլորը եւ խօսք առնելով կ'ըսէ. «սիրելիներ, ձեր բոլոր առաջարկները կը վերաբերին լուծումներու, որոնք կապուած են արկածը պատահելէ ետք միջոցառումներու: Արդեօք աւելի լաւ պիտի չըլլար, եթէ կանխարգիւող ձեւի մը մասին մտածէիք, այսինքն մտածէիք թէ ինչպէ՞ս կարելի է երեխաները փրկել կամ երեխաներուն արգելք հանդիսանալ, որպէսզի չիյնան ձորը»: Հաւաքուած բազմութեան մէջ, պահ մը կը

տիրէ քար լուսին: Վերջապէս, անոնք կը համաձայնին բակը շրջապատել ամուր ցանկապատերով, որպէսզի առաջը առնեն ամէն տեսակի արկածներու, ինչ որ աւելի դիրին էր քան արկածը պատահելէ ետք միջոցառումներու դիմելը:

Այս պէտք է ըլլայ մեր պարտականութիւնը. իբրեւ ուսուցիչներ կամ մանուկներու կրթութեան եւ ապահովութեան մէջ հիմնական դերակատարութիւն ունեցող անհատներ ըլլալ զգուշ, կանխարգիլող, արթուն եւ հնարամիտ, որպէսզի ապահովենք մեր մանուկներու հոգեկան, բարոյական, մտային եւ ֆիզիքական աճը եւ անոնց առջեւէն վերցնենք ամէն տեսակ խոչընդոտ եւ վտանգ:

Այս պարբերաթերթին մէջ այս սինակը կը հետապնդէ մէկ նպատակ մեր փոքրիկներուն ապահովել այս ամէնը, որպէսզի անոնք առիթ ունենան դառնալու հայ ժողովուրդի հանգիստ, զարգացած եւ արդիւնաւէտ անդամները:

Մեզի տրամադրուած սինակի առաջին նիւթը մեր շրջապատին մէջ գոյութիւն ունեցող երեւոյթի մը մասին է, որ անպայմանօրէն միշտ ալ բացայայտ տեղի չ'ունենար, իսկ անոր ձգած հետքերը եւ հետեանքները անպայմանօրէն չեն վերագրուիր անոր: Մեր նիւթը bullying-ի՝ բռնադատումի մասին է, որ վերջին քսանամեակին գրաւած է կրթական համակարգէն ներս աշխատող եւ անոր հետ կապ ունեցող զրեթէ բոլոր անհատներու ուշադրութիւնը:

### **Ի՞նչ է բռնադատումը**

Փոքրիկներու շրջանակին մէջ բնական է, որ մանուկներ իրար անուն կախեն, հարցեր ունենան, եւ ցաւցնեն զիրար: Մեզմէ իրաքանչիւրի յիշողութեան մէջ հաւանաբար կայ դէպք մը, որուն ընթացքին ան վշտացած է կամ վշտացուցած՝ իր ընկերոջը: Այսքանը բնական է, որովհետեւ ժամանակի ընթացքին փոքրիկներ կ'անդրադառնան, որ նման վարուելակերպ ընդունուած չէ ընկերութեան մէջ, հետեւաբար աշխատանք կը տանին փոխելու կացութիւնը: Փոքրիկներու միջեւ պատահող ընթացիկ դէպքերու ժամանակ կարելի է տեսնել հետեւեալ յատկանիշերը:

1. Կողմերը չեն պարտադրեր իրենց կեցուածքները:

2. Պատճառներ կու տան իրենց տարակարծութիւնները բացատրելու համար:

3. Ընդհանրապէս ներողութիւն կը խնդրեն իրարմէ եւ կը հաշտուին:

4. Կամ կը սկսին բանակցիլ եւ հասնիլ իրենց նպատակին:

5. Վերջապէս, երբ արդիւնքի չհասնին՝ կրնան ձգել եւ հեռանալ:

Բռնադատումը կոռուզանութեան ձեւ մըն է յատուկ յատկանիշերով: Այդ յատկանիշերէն ամէնէն հիմնականը երկու կողմերու միջեւ ուժերու անհաւասարակշռութիւնն է, որ անպայմանօրէն կապ չունի ֆիզիքական տուեալներու հետ, որովհետեւ անհաւասարակշռութիւնը կրնայ ըլլալ ձայնի կշռոյթին մէջ, կեցուածքին, կամ բռնադատողներու թիւին մէջ: Բռնադատումի մէջ բռնադատողը շարունակական եւ հետեւողական ձեւով բռնադատողին կը պատճառէ նեղութիւն, ցաւ եւ ստորադաս ըլլալու զգացում: Բռնադատողը այս բոլորը կ'ընէ գիտակցելով իր ըրած արարքներու հետեանքներուն, առանց յանցաւորի զգացում ունենալու:

Իսկ բռնադատողը այնքան կ'ընկճուի այս կացութեան մէջ, որ կը սկսի հաւատալ, որ ինք արժանի է այս կացութեան եւ վարուելակերպին:

Կան բռնադատումի տարբեր ձեւեր.

1. ֆիզիքական բռնադատում. երբ բռնադատողը կը ծեծէ, կը հրէ, կը քաշքշէ զոհը, կ'ազդարարէ, կը պարտադրէ, որ ան իրեն տայ դրամ, ապրանքներ, ուտելիք եւ կամ կը փճացնէ անոր առարկաները:

2. բերանացի բռնադատում. երբ բռնադատողը անարգական խօսքերով եւ հայհոյանքներով կը վարկաբեկէ զոհը եւ կը նուաստացնէ զայն, կրնայ նաեւ անոր անուններ կախել:

3. սեռային բռնադատում. երբ բռնադատողը անպատշաճ խօսքերով, ձեւերով կամ արարքներով կը նեղէ զոհը:

4. մշակութային կամ ցեղային բռնադատում. երբ անարգական արարքներով, հեզնական մանրավէպերով, գծագրութիւններով,

բռնադատող կողմը կը վարկաբեկէ դիմացի կողմը:

### **Ու՛ր կը պատահին այս դէպքերը**

Բռնադատումի դէպքեր կը պատահին ամէնէն շատ դպրոցներու մէջ, ճամբան, տունը, մարզական խաղերու ընթացքին, աշխատատեղիին մէջ եւ անշուշտ համացանցի վրայ:

Բռնադատումը կրնայ ըլլալ ուղղակի՝ երբ բռնադատողը ուղղակի կը հարուածէ զոհը, եւ անուղղակի՝ երբ բռնադատողը անուղղակի միջոցներով կը կատարէ իր արարքները, ինչպէս բամբասանքներ եւ սուտ լուրեր տարածել անհատին մասին, չձգել որ զոհը մաս կազմէ խումբին կամ ընկերները համոզել, որ անոնք հեռանան զոհէն:

### **Ինչպէ՞ս անդրադառնալ, որ մանուկ մը կ'ենթարկուի բռնադատման**

Բոլոր անհատները, ի մասնաւորի մանուկները, երբ հարցեր կ'ունենան հոգեբանական, կրթական, զգացական, կամ ընտանեկան, այդ հարցերը իրենք գիրենք կ'արտայայտեն այդ անհատին կամ մանուկին վարուեալներպին եւ աշխատանքի մէջ:

Այս ծիրէն ներս, անպայման ուշադիր պէտք է ըլլալ երբ մանուկ մը ցոյց տայ անակնկալ անհանգստութեան նշաններ, երբ անտրամադիր ըլլայ, երբ չկարենայ կեդրոնանալ խաղի, դասի կամ խօսակցութեան ընթացքին, ինքզինք փորձէ հեռու պահել այն վայրէն, ուր կը պատահի բռնադատման արարքը, դառնայ ջղագրգիռ, ընկերները փոխէ, սկսի ունենալ կարգապահական հարցեր, մարմնին վրայ կ'երեւան կասկածելի կապոյտ նշաններ, եւ յաճախակի ապրանք եւ դրամ սկսի «կորսնցնել»:

### **Ինչպիսի՞ զգացումներ կ'ունենայ բռնադատողը**

Բռնադատողը յաճախ վախ ու սարսափի մէջ կ'ըլլայ, եւ այս վիճակը չի ձգեր, որ ան բնական ձեով շարունակէ իր կեանքը:

Բարկութիւնը կրնայ դառնալ նկարագրային գիծ, որուն կրնան ընկերանալ յուսախաբութեան, անօգնականութեան եւ մինակ ըլլալու զգացում: Բռնադատողը ինքզինք կը զգայ նուաստացած

Եւ անոր ինքնարժեւորումը կ'ըլլայ շատ ցած: Ան յաճախ կը տա-  
նապի հալածախտէ:

### **Երբ պէտք է սկսիլ անհանգստանալ եւ միջոցառում- ներու դիմել**

Պէտք է սկսիլ մտահոգուիլ, երբ մանուկին մօտ կը նկատուի

- Անակնկալ անհանգստութիւն
- Վատ տրամադրութիւն
- Կեդրոնացումի պակաս
- Նկարագրային փոփոխութիւններ
- Դպրոցէն հեռու մնալու փափաք
- Վիճաբանելու, կռուելու փափաք
- Ընկերներու փոփոխութիւն
- Սովորութիւններու փոփոխութիւն
- Զբօսանքներէ հեռու մնալու փափաք
- Կարգապահական հարցեր
- Կասկածելի կապոյտ նշաններ մարմնի վրայ
- Յաճախակի դրամի եւ ապրանքի կորուստ

### **Ինչու՞ պէտք է աշխատինք որ դադրի բռնադատումը**

Ընդհանրապէս երբ կը խօսինք բռնադատումի մասին, այն տպաւորութիւնը կը ստանան շատեր, որ մտահոգուած ենք միայն բռնադատուողով: Այս կարծիքը բացարձակապէս չի համապա-  
տասխաներ իրականութեան: Բռնադատողը նոյնքան պէտք ունի ուշադրութեան եւ ուղղութեան, որովհետեւ բռնադատողը ինք եւս կը տառապի լուրջ հարցերէ, թերեւս ինք եւս իր կարգին ենթակայ է բռնադատումի՝ ուրիշի մը կողմէ եւ կրնայ ըլլալ որ այս արարք-  
ները օգնութեան կանչեր են բռնադատողին կողմէ: Պէտք է դադ-  
րեցնել բռնադատումը, որովհետեւ կրնան լուրջ ֆիզիքական, հոգեբանական եւ մտային հարցեր ստեղծել երկու կողմերու եւ այս արարքներուն ականատես շրջապատին մօտ: Եւստ մը դպրոցա-  
կան եւ ընկերային դժուարութիւններ կրնան հետեւանք ըլլալ բռնա-  
դատումի արարքներու: Իսկ ամէնէն կարեւորը բռնադատումը

պատճառ կրնայ ըլլալ այլ վայրագ արարքներու: Միացեալ Նահանգներու մէջ, վերջին տարիներուն, դպրոցական շրջափակէն ներս կատարուած սպաննութիւններու հետաքննութիւններէն ի յայտ եկած են, որ արարքներու հեղինակները ճարահատ բռնադատողներ են, որոնք ձերբազատուելու համար իրենց անտանելի վիճակէն, երբեմն կը դիմեն սպաննութիւններու, իսկ այլ պարագաներու՝ իրենց ցասումն ու բարկութիւնը կ'արտայայտեն այս ձեւով:

Հետեւաբար իբրեւ պատասխանատու չափահասներ, ամէն միջոցներու պէտք է դիմենք, որպէսզի առաջքը առնենք նման դէպքերու:

### **Ի՞նչ կրնանք ընել**

- Առաջին հերթին պէտք է վստահ ըլլանք, որ աշակերտները լսեն այս բոլորը, եւ իմանան որ այս յարաբերութեան ձեւը ձիշոյ եւ առողջ ձեւ մը չէ:


- Մեր հսկողութեան տակ գտնուող մանուկներուն անհրաժեշտ է, որ ապահովութեան զգացումը տանք, առաւելագոյն հսկողութեամբ, դպրոցական միջավայրէ ներս բոլոր վայրերու մէջ:

- Յաճախ կապի մէջ ըլլանք աշակերտներու հետ, անոնց տանք վստահութիւն եւ լրջութեամբ մտիկ ընենք անոնց ըսելիքները: Նաեւ ուշադիր ըլլանք անոնց շարժումներուն որպէսզի ամէնէն փոքր փոփոխութեան պարագային կարենանք հետապնդել հարցը:

- Բռնադատուող մանուկին բնաւ չմեղադրենք, չծաղրենք իբրեւ վախկոտ անհատ:

- Անոր պէտք է բացատրենք խնդրին էութիւնը եւ հասկցնենք, որ այս հարցին մէջ ինք չէ սխալ ընթացքի մէջ եղողը, այլ բռնադատողը եւ վստահ ըլլանք իրեն փոխանցելու, որ նման դէպքեր ունին իրենց անունները եւ սերտուած են մասնագէտներու կողմէ:

- Ճշդենք, թէ ուր կը պատահին արարքները եւ մանուկէն պահանջենք, այս հարցին լուծման մասին տայ իր պատկերացումը: Կարելոր է ուշադիր ըլլանք անոր ինքնարժեւորման պահպանումին:



- Աշակերտին սորվեցնել ազդու ձեւեր գործածել՝ հակազդելու համար բռնադատողին եւ հեռուէն հետեւիլ դէպքերու ընթացքին:

- Նոյն ձեւով հետապնդենք բռնադատողը. Խօսինք, բացատրենք եւ զգուշացնենք անոր եւ յորդորենք, որ վերջ դնէ իր ընթացքին:

- Փնտտենք բռնադատողի արարքներու իսկական պատճառները եւ զանոնք հետապնդենք մինչեւ վերջ:

- Բնաւ հարցը չմեղմացնենք եւ չըսենք թէ այս հարցերը բնական պատահարներ են փոքրիկներու միջեւ:


- Իսկ երբ հարցը կարելի չէ լուծել մեր ունեցած միջոցներով, անվարան դիմել մասնագէտի խորհուրդին:

Յուսանք այս յօդուածը ձեզի կը մղէ, որ հետաքրքրուիք այս լուրջ հարցով, որպէսզի օգնէք, որ մատղաշ սերունդը մեծնայ եւ կրթութիւն ստանայ առողջ միջավայրի մը մէջ եւ դառնայ վաղւան առողջ հայ մարդը:

Մխալ կարծիքներ բռնադատումի մասին	Ճիշդ կարծիքներ բռնադատումի մասին
Բռնադատումը կոուազա- նութեան ձեւ մըն է:	Բռնադատումը կոուազա- նութեան յատուկ ձեւ մըն է :
Բռնադատումը ժառանգա- կան է :	Բռնադատողը կը սորվի իր շրջանակէն:
Բռնադատողը պէտք է վտարուի ամէն տեղերէ:	Բռնադատողը օգնութեան կը կարօտի:
Բռնադատումը ժամանակի ընթացքին կը մոռցուի:	Առանց մասնագիտական միջամտութեան, բռնադատու- մը այլ վայրագութիւններու կը տանի:
Բռնադատումը մեծնալու գործընթացին մաս կը կազմէ:	Բռնադատումը ազդանշան է աւելի խորունկ հարցերու:
Պէտք է ձգել, որ զոհը ինք լուծէ հարցը:	Զոհը մինակը չի կրնար լու- ծել այս հարցը, շրջապատը պէտք է օգնէ իրեն:
Հեռատեսիլի յայտագիրնե- րու եւ վիտէօ-խաղերու վայ- րագ տեսակները կապ չունին բռնադատումի հետ:	Հեռատեսիլի յայտագիրնե- րը եւ վայրագ վիտէօ-խաղերը կը նպաստեն բռնադատումին:








Գոհար Գանտահարեան

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ՃԻՇԴ ՈՒՂԻՈՎ

Տիկին Գոհար Գանտահարեան ունի Մագիստրոս Արուեստից վկայական (M.S.) Հայ Ժողովուրդի Պատմութիւն ճիւղին մէջ՝ Երեւանի Պետական Համալսարանէն, նաեւ Պսակատր Արուեստից վկայական (B.A) Քաղաքական Գիտութիւններու ճիւղին մէջ եւ Ուսուցման վկայական (Teaching Diploma)՝ Հայկազեան համալսարանէն: Մասնակցած է վարժողական ծրագիրներու եւ դասընթացքներու Երեւանի Պետական, Լիբանանեան-Ամերիկեան (LAU), Պէյրութի Ամերիկեան եւ Լոնտոնի Քեմպրիժ Համալսարաններուն, ինչպէս նաեւ Նիւ Եորքի ՄԱԿ-ի կեդրոնին մէջ:



Պատմութեան դասանիւթը կ'ենթադրէ տեղեկութիւններ, պատմութիւնը ընկալելու հմտութիւններ եւ ուսուցողակարգ (մեթոտաբանութիւն): Այս երեք ենթաբաժինները բնականաբար կը վերաբերին նաեւ հայոց պատմութեան: Ասոնց վրայ կ'աւելնայ ինքնութեան հասկացողութիւնն ու պատկանելիութեան գիտակցութիւնը: Սեփական ժողովուրդի պատմութիւնը իմանալը, ազգային պատկանելիութեան եւ ինքնութեան գիտակցութիւնը ամրապնդող գործօն է:

Պատմութիւնը ընկալելու հմտութիւնը սերտօրէն կապուած է քննական միտքի զարգացման հետ: Իսկ քննական միտք ըսելով նախ պէտք է հասկնանք տրամաբանութեան վրայ կառուցուած դատողութիւն: Դատողութիւնը, իր կարգին, որեւէ տեղեկութեան ճշգրտութեան հաստատման հիմնական եղանակն է: Դատողութիւնը կամ քննական միտքը նախ կ'արժեւորէ իրեն փոխանցուած տեղեկութիւնները, ապա կը վերլուծէ դասանիւթին յանգած եզրակացութիւնները, նախքան զանոնք իւրացնելը: Եւ վերջապէս, կը ձշղէ ռազմավարութիւն՝ պատմական հարցերը լուծելու:

Ուրեմն, անհրաժեշտութիւն կը դառնայ քննական միտքի զարգացումը աշակերտին մօտ: Աշակերտը պէտք է արագօրէն գիտնայ տուեալ նիւթին գլխաւոր գաղափարը, որմէ ետք ան առիթը պէտք է ունենայ դէպքերու համեմատութիւնները կատարելու, միաժամանակ մտածելով թէ պատմութեան մէջ առնուած հիմնական քայլ մը կամ դէպք մը ինչ հետեանք կրնայ ունենալ:

Հարցադրումներու շուրջ լուծումներու յանգիլը պէտք է կատարել հաւաքական ձեւով, աշակերտներու մասնակցութեամբ եւ քննարկումներով:

### **Հարցում հարցնելու հմտութիւն**

Հարցումը աշակերտին կողմէ ուղղուած քննական մտածողութեան նախապայմաններէն է: Անիկա շարժառիթներու ծանօթացման մղումն է, որ պէտք է թափ տայ աշակերտին մօտ՝ տրամաբանութիւն եւ դատողութիւն զարգացնելու համար: Հարցումը հարցնելու հմտութիւնը ապահովելու համար պէտք է նկատի ունենալ հետեւեալ մակարդակները.-

ա) Գիտութեան մակարդակը, որ կապուած է աշակերտին հրամցուած տեղեկութիւններու ճանաչողութեան եւ վերլիշումին հետ. (օրինակ՝ ե՞րբ տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը):

բ) Հասկացողութեան մակարդակը, որ տեղեկութեան հիման վրայ կը վերարտադրէ իրեն փոխանցուածը եւ բաղդատականներ կը կատարէ այլ դէպքերու հետ. (օրինակ՝ ի՞նչ գիտես Վարդանանց պատերազմի մասին):

գ) Կիրարկումի մակարդակը, որ կապուած է իր սորվածը գծելով կամ խաղի միջոցներով վերարտադրելու աշխատանքին հետ. (օրինակ՝ գծէ՛ Վարդանանց պատերազմը):

դ) Վերլուծումի մակարդակը, որ քննական մտածողութեան հիմնական բաժինն է, կապուած՝ բաղդատական մտածողութեան հետ, դրդապատճառները պեղելու, պատահարներն ու հետեանքները իրար կապելու: Վերլուծումի մակարդակին մէջ, կայ նաեւ տեղեկութիւններ օգտագործելով եզրակացութեան յանգիլը, որ կը կատարուի տուեալներու հիման վրայ եզրակացութեան յանգիլը եւ առիթ կու տայ որ աշակերտը այդ տուեալներէն ոմանք ընդունի եւ ոմանք ալ մերժէ. (օրինակ՝ ինչո՞ւ պատահեցաւ Վարդանանց պատերազմը):

ե) Համադրումի մակարդակը, ուր աշակերտը կը զարգացնէ իր ստեղծագործական միտքը: Ան տեսակէտներն ու առարկութիւնները կը համեմատէ հարցադրում մը լուծելու համար. (օրինակ՝ եթէ Վարդանանց պատերազմը տեղի չունենար, ի՞նչ կրնար ըլլալ):

զ) Արժեւորումի մակարդակ, որ որոշ չափով կապուած է համադրումի մակարդակին հետ, տրուած ըլլալով որ ստեղծագործական միտքի զարգացումը կ'ենթադրէ այս մէկը եւ: Անձնական տեսակէտ բանաձեւելը եւ անձնական դատողութիւն փոխանցելու մակարդակին մասին է խօսքը. (օրինակ՝ պէ՞տք է տեղի ունենար Վարդանանց պատերազմը):

Այս բոլորը կը նպաստեն, որ աշակերտը դուրս գայ միայն լսողի, կրատրական իր դիրքէն եւ մտնէ մասնակցողի դիրքին մէջ: Մասնակցութիւնը կը զարգացնէ պատմական նիւթերուն մասին

իր հետաքրքրությունները մանաամհ էրբ գիտակցի, որ առիթը կ'ունենայ այս ձեռով դէպքերուն պատճառները, շարժառիթներն ու հետեւանքները պեղելու:

### **Ինչ նկատի ունենալ**

Այս ուսուցողակարգը իրականացնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ աշակերտին տարիքը, հետաքրքրություններն ու աշխատանքի այլազանությունը: Ի վերջոյ մեթոտաբանությունը պարզապէս միջոց է դասանիւթին էութիւնը լիարժէք ձեռով աշակերտին փոխանցելու: Ուրեմն, անհրաժեշտ է, որ ուսուցիչը ոչ միայն լաւատեղեակ ըլլայ հայոց պատմութենէն, ընդհանուր եւ շրջանի պատմութենէն, այլ նաեւ հետեւած ըլլայ այժմէական դէպքերուն, պատմական դէպքերուն հետ բաղդատականներ ընելու եւ աշակերտին մօտ պատմութեան հմտութիւնները զարգացնելու համար:

Այս ուսուցողակարգի վրայ պէտք է աւելցնել նաեւ ուսուցիչին մանկավարժական պատրաստութիւնը:


### **Պատմութեան հմտութիւններ**

Աշակերտին մօտ պատմութեան հմտութիւնները զարգացնելու համար պէտք է աշխատիլ այնպէս, որ աշակերտը կարենայ բնորոշել պատմական դէպքին առընչուող տուեալ դասանիւթին գլխաւոր գաղափարը, դէպքերուն պատճառներն ու հետեւանքները, կարենայ զատել իրականութիւնը տեսակէտէն եւ յաջողի կարդալ դիպաշարներու ժամանակագրական գիծը: Հմտութիւնը զարգացնելու համար անհրաժեշտ են նաեւ տախտակներու, քարտէսներու, ցուցագիծերու (graph) ընթերցումը:

Պատմութեան հմտութիւնը կապուած է նաեւ սկզբնաղբիրներու եւ երկրորդական աղբիրներու ուսումնասիրութեան հետ:

### **Հայոց պատմութեան ուսուցման նպատակ**

Հայոց պատմութեան դասանիւթին նպատակը հայ աշակերտին փոխանցելու ընթացքին նախ պէտք է փոխանցել ծանօթութիւններ



Եւ տեղեկութիւններ: Ասոր զուգահեռ աստիճանաբար պէտք է զարգացնել տրամաբանութեան վրայ հիմնուած քննական մօտեցում: Տարբերելով ընդհանուր պատմութեան դասանիւթէն, հայոց պատմութիւնը կը զարգացնէ հայ ըլլալու հպարտութեան զգացումը, միաժամանակ հայկական մշակոյթի զանազան երեսները ծանօթացնելով աշակերտին:

### **Ուսուցիչին դերը**

Մնայուն դրական տրամադրութեամբ, ուսուցիչը պէտք է կարենայ աշակերտը առաջնորդել սորվելու եւ իր մասնակցութիւնը բերելու դասարանէն ներս: Այս գործընթացին մէջ աշակերտը պէտք է գիտակցի եւ զգայ որ ինք զարգացում մը կ'ապրի:

Դասաւանդութեան կարեւոր համեմատութիւնը պէտք է ըլլայ հարցադրումներու բաժինը: Ուսուցիչը հարցումը հարցնելէ ետք քանի մը երկվայրկեան պէտք է սպասէ համբերութեամբ եւ հանդուրժող տրամաբանութեամբ: Եթէ ճիշդ կամ բաւարար պատասխան չստանայ, ուսուցիչը պէտք է պատասխանին մէջ դրական բաժին մը առնէ ու զարգացնէ:

Նկատի ունենալ անպայման, որ կը պատասխանեն անոնք, որոնք լաւ արտայայտուիլ գիտեն: Հակամէտութիւն նկատուած է տկար աշակերտներուն նուազ ժամանակ տրամադրելու: Պէտք չէ ընդմիջել եւ այդ ձեւով լրացնել անոնց չտուած պատասխանը:


Աշակերտին մօտ դրական փոփոխութիւններ յառաջացնելու համար դասաւանդութեան ձեւը պէտք է ըլլայ հետաքրքրական, հասկնալի, յստակ: Հետաքրքրութեան կեդրոնը պէտք է ըլլայ ինքը՝ աշակերտը:

Տուեալ դասին ամբողջացումին անմիջապէս պէտք է հետեւի գրաւորը: Հարցարանը հարկ է, որ ըլլայ յստակ եւ չխճողուած:

### **Ուսուցողակարգի կարեւորութիւնը**


Առանց ուսուցման ուսուցողակարգի, դասանիւթին էութիւնը չի փոխանցուիր աշակերտին: Փոխանցուածը կ'ըլլայ թերի:


Ուսուցողակարգը մասնագիտական մօտեցումն է արդիւնաւէտ



մանկավարժական դրուֆիններու օգտագործումով աշակերտին փոխանցելու պատմութեան դասանիւթին հիմնական առանցքները: Ուուցողակարգն է, որ կ'աշխուժացնէ աշակերտին ներգործօն մասնակցութիւնը դասանիւթի ընկալման, քննարկումին եւ այս բոլորին ճամբով նպաստած կ'ըլլայ քննական մտածողութեան զարգացումին:







Գայանէ Թաղետսեան

**ԿՈՄԻՏԱՍԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ  
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
«ԵՐԱԺՆՏՈՒԹԻՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ  
ԴԱՍԱԺԱՄԵՐՈՒՆ\***

Գայանէ Թաղետսեան Հայաստանի կրթութեան ազգային ինս-  
դիդուդի Հայագիտութեան եւ ընկերային-մշակութային առարկա-  
ներու մասնագէտ է, կ'աշխատակցի հայրենի մամուլին եւ ունի  
մանկավարժական նիւթերու մասին բազմաթիւ յօդուածներ:

\*վերածուած արեւմտահայերէնի, դասական ուղղագրութեամբ:



«Որքան ապրի հայկական երաժշտութիւնը,  
այնքան կ'ապրի Հայաստանը»

«Մէկ հասկցուած անկեղծ ձայնը հազար  
ճառ կ'արժէ, որովհետեւ ճառը պէտք է  
մարսէ հասարակութիւնը, որ կարենայ ան-  
կէ սնունդ առնել, ինչ որ ժամանակներու  
գործ է:

Իսկ ձայնը վայրկեանին մէջ կը թափանցէ  
մարդու կուրծքէն ներս եւ այնտեղ կը հիմ-  
նէ զգացման ու մտքի վառարան»:

### Կոմիտաս

Կոմիտասի երաժշտութիւնը իր պարզութեամբ եւ մաքրութեամբ  
հոգեհարազատ է մանուկներուն: Սփիւռքահայ դպրոցներուն մէջ  
Կոմիտասի հետ ծանօթութիւնը կարելի է սկսիլ տակաւին նա-  
խադպրոցական տարիքէն, այնուհետեւ զայն խորացնել նախակր-  
թարանի դասարաններուն մէջ:

Չորրորդ դասարանին մէջ, օրինակ, «երաժշտութիւն» դասա-  
ժամին մանուկները կարելի է ծանօթացնել Կոմիտասի կեանքին  
եւ ստեղծագործութեանց: Անոնք կրնան ունկնդրել եւ սորվիլ Կոմի-  
տասի «Կաքաւի երգը», «Կոունկը», «Շողեր ջանը», դաշնամուրա-  
յին պարերէն՝ «Շուշիկին» եւ «Երանգին»:

Ստորեւ կը ներկայացնենք դաս-ելոյթի օրինակ, զոր սփիւռքա-  
հայ դպրոցի երաժշտութեան ուսուցիչը կրնայ օգտագործել Կոմի-  
տասի 140-ամեակին նուիրուած դասերը եւ ձեռնարկները  
կազմակերպելու ժամանակ:

### Դասի Օրինակ

*Դասարանը՝*

4րդ, նախակրթարան:

*Դասին նիւթը՝*

Կոմիտասի ծննդեան 140-ամեակին նուիրուած դաս-ելոյթ:

### *Դասին նպատակը՝*

- սէր ներշնչել աշակերտներուն մէջ Կոմիտասի ստեղծագործութիւններուն նկատմամբ,

- արժեւորել Կոմիտասի ժողովրդական երգերու մշակումները,

- ձեւաւորել Կոմիտասի ստեղծագործութիւնները երգելու, ունկնդրելու, տարբերելու եւ վերլուծելու կարողութիւններ եւ հմտութիւններ:

### *Ակնկալուող արդիւնքներ՝*

- աշակերտները կը ծանօթանան Կոմիտասի կեանքին եւ ստեղծագործութիւններուն, կը ճանչնան անոնց կարեւորագոյն նշանակութիւնը հայ ազգային երաժշտութեան զարգացման գործին մէջ,

- կ'երգեն, կ'ունկնդրեն եւ կը վերլուծեն Կոմիտասի ստեղծագործութիւնները:

### *Դասին ընթացքը՝*

Դասարանը կը բաժնենք 5 խումբի: Իւրաքանչիւր խումբի կու տանք առանձին յանձնարարութիւն.

- առաջին խումբը պէտք է ներկայացնէ Կոմիտասի կեանքը եւ ստեղծագործական ուղին: Խումբի իւրաքանչիւր անդամ պէտք է քանի մը նախադասութեամբ պատմէ հետաքրքրական դրուագներ:

- 2-րդ խումբը կը ստանձնէ քնարական երգերու ներկայացումը. այդ երգերով Կոմիտասը արտայայտած է սիրոյ զգացում, հոգեկան տարբեր ապրումներ, բնութեան նկարագրութիւններ:

Սորվողները պէտք է կատարեն՝ «Երկինքն ամպել ա», «Էս առուն ջուր է գալիս», «Անձրեն եկաւ», «Շողեր ջան», «Քելէ, քելէ» երգերը, այնուհետեւ ունկնդրեն այդ ստեղծագործութիւնները Կոմիտասի անուան քառեակին կամ երգչախումբի կատարմամբ (բնականաբար ուսուցիչը կրնայ նշուած երգերը փոխարինել այլ երգերով):

- 3-րդ խումբը կը ստանձնէ աշխատանքային երգերու ներկայացումը. անոնք կը պատկերեն հայ գեղջուկին չարքաշ կեանքը, անոր պայքարը բնութեան տարերքին դէմ: Հայ գիւղացին կ'երգէ վար ու ցանքի, հունձի, կալի, քաղհանի ժամանակ, երգի միջոցով

թեթեւեցնելով իր հոգեերը: Խումբին անդամները կը կատարեն «Քաղհան», «Խնոցիի երգը», «Ճախրակի երգը», «Հորովելը», «Կալի երգը» եւ այլն:

- 4-րդ խումբը կը ստանձնէ ծիսական երգերը: Կոմիտաս իր գործունէութեան մէջ զգալի տեղ յատկացուցած է հարսանեկան-ծիսական ու կենցաղային բնոյթի երգերուն, զորս ան հասցուցած է արուեստի բարձր մակարդակի: Անոնցմէ են «Թագուորի մեր դուրս արի», «Սոնա եար» (Վարդավառ), «Խնկի ծառ» (Համբարձման տօն) եւ այլն:

- 5-րդ խումբը կը ստանձնէ մանկական երգերը: Կոմիտաս շատ սիրած է մանուկները եւ մեծ նշանակութիւն տուած է անոնց գեղարուեստական դաստիարակութեան: Խումբը պարտաւոր է երգել եւ ունկնդրել «Կաքաիկ», «Լորիկ», «Վարդի ծառ» եւ այլ մանկական երգեր:

Դասի վերջաւորութեան ուսուցիչը հարցումներու միջոցով ամփոփելով նիւթը՝ նորէն կ'անդրադառնայ Կոմիտասի ստեղծագործութեան եւ յատկապէս կը շեշտէ անոր կարեւորութիւնը հայ ազգային երաժշտութեան զարգացման գործին մէջ:


### *Այդ հարցումներէն են՝*

1. Բացի նշուածներէն՝ ուրիշ ինչ թեմաներով երգեր գրած է Կոմիտաս (պատասխան՝ հոգեւոր, պանդխտութեան, հայրենասիրութեան):

2. Ինչ գիտէք դաշնամուրային պարերուն մասին:


Ուսուցիչը աշակերտներուն կրնայ առաջարկել գրել հնգեակ կամ ագրոսոփքոս՝ նուիրուած Կոմիտասին, եւ անոր համապատասխան՝ յօրինել մեղեդի:

Դասարանի բոլոր սորվողները կրնան երգերը կատարել խումբերուն հետ միասին: Երգերը ներկայացնելու ժամանակ խումբերը կրնան բեմականացնել զանոնք, որպէսզի ընկալուըն ատելի իրական եւ շօշափելի ըլլայ: Կարելի է նաեւ ցուցադրել այդ երգերէն



ստացած տպաւորութիւնները եւ զգացումները արտայայտող պաստառներ:

Եթէ երգերուն մէջ կան պարային տարրեր, ապա պէտք է պարել եւ, հնարաւորութեան պարագային, նուագարաններով նուագակցիլ:



«ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»  
ՆԻՒԹԸ  
ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԱՂԲԻՒՐՆԵՐ  
ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ

*Ուսուցիչներու համար կը ներկայացնենք շարք մը կայքէջեր,  
որոնք կը պարունակեն Հայկական Ցեղասպանութեան նիւթը ու-  
սուցանելուն օժանդակող բազմաթիւ նիւթեր:*





Ստորեւ ուսուցիչներու համար կը ներկայացնենք շարք մը կայքէջեր, որոնք կը պարունակեն Հայկական Յեղասպանութեան նիւթը ուսուցանելուն օժանդակող բազմաթիւ նիւթեր:

1. TeachGenocide.com  
**www.teachgenocide.com**

Այս կայքէջը ըստ էութեան համացանցի վրայ գտնուող գրադարան մըն է, որ կը հրատարակուի մասնաւորապէս ուսուցիչներու համար՝ Յեղասպանութեան Ուսուցման Նախագիծին (The Genocide Education Project / [www.genocideeducation.org](http://www.genocideeducation.org)) կողմէ: Հոն կարելի է գտնել Հայկական Յեղասպանութեան թէ այլ մարդկային իրաւունքներու զանգուածային խախտումներու մասին զանազան ուսուցման աղբիւրներ՝ զորս կարելի է գործածել ուղղակիօրէն դասարաններու մէջ: Այս «գրադարանին» մէջ տեղ գտած են դասագիրքեր, օրաթերթերէ վերցուած գրութիւններ, տեսաերիզներ, քարտէսներ, վերապրողներու վկայութիւններ եւ ատելիւն:

2. Facing History & Ourselves – FHAO  
**www.facinghistory.org**

FHAO-ն ոչ միայն կը հայթայթէ հոյակապ աղբիւրներ Հայոց Յեղասպանութեան մասին, այլ նաեւ առիթ կ'ընծայէ առցանց (online) կապ հաստատելու եւ ձեռք ձգելու դասագիրքեր: «Դասեր եւ Ընթերցումներ Հայկական Յեղասպանութեան Վերաբերեալ» (Lessons & Readings on the Arm. Genocide) վերնագրին տակ կարելի է գտնել դասաձրագիրներու (lesson plans) շարք մը՝ Հայկական Յեղասպանութեան զանազան երեսներուն մասին:

«Ոձիրներ մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ - Հայոց Յեղասպանութիւնը» (Crimes Against Humanity & Civilization: The Genocide of the Armenians) աշխատանքը ուղեցոյց մըն է, զոր կարելի է հատուած առ հատուած վարբեռնել (download) համացան-

ցէն եւ օգտագործել աշակերտներու ուսուցման համար:

3. California Department of Education

[www.cde.ca.gov/re/pn/fd/modcurr\\_hr\\_pdf\\_asp](http://www.cde.ca.gov/re/pn/fd/modcurr_hr_pdf_asp)

Քալիֆորնիոյ Կրթական Նահանգային Գրասենեակի կայքէջին վրայ՝ վերոնշեալ բաժնին մէջ կը գտնենք Մարդկային Իրաւունքներու եւ Յեղասպանութեան թեմայի ուսուցման դպրոցական կրթական ծրագրի տիպօրինակ մը՝ պատրաստուած Քալիֆորնիոյ նահանգային կրթական վարիչ մարմինի (California State Board of Education) մասնագէտներուն կողմէ: Սոյն տիպօրինակը, որ կը խօսի մարդկային իրաւունքներու եւ Յեղասպանութեան մասին, կարելի է ունենալ միայն որպէս PDF ծրար: Անիկա կրնայ մեծապէս օգնել ուսուցանել Հայկական Յեղասպանութեան թեման՝ յատկապէս 20րդ դարու հետագայ ցեղասպանութիւններուն հետ համեմատելու ծիրին մէջ:

Կայքէջին մէջ կը կարդանք հետեւեալ բացատրութիւնը.

«Մարդկային Իրաւունքներու եւ Յեղասպանութեան թեմայի ուսուցման դպրոցական կրթական ծրագրի սոյն տիպօրինակը կ'արտացոլէ Քալիֆորնիոյ ժողովուրդին եւ անոր օրէնսդիր ներկայացուցիչներու փափաքները, եւ կը միտի դասարանային աշխատանքներու ընթացքին հետեւողական ուղղութիւններ տալ ուսուցիչներուն եւ աշակերտներու կրթութեան պատասխանատու անձերուն:

Այս տիպօրինակը ուղղուած է Քալիֆորնիոյ պետական դպրոցներուն մէջ պատմութեան եւ ընկերային գիտութիւններ արծարծող դասանիւթերու ուսուցման»:

4.Ողջակիզման եւ Յեղասպանութեան Ուսուցման Կեդրոն, Մինիսոթայի համալսարան (Center for Holocaust and Genocide Studies, University of Minnesota)

[www.chgs.umn.edu](http://www.chgs.umn.edu)

Այս կեդրոնին տնօրէնը, Ստիֆըն Ֆէնշթէյն (Stephen Feinstein), Յեղասպանութեան հռչակաւոր ուսումնասիրող, շատ ուշագրաւ էջ մը պատրաստաւ ծ է Յեղասպանութեան մասին, որ կը պարունակէ Հայոց Յեղասպանութեան մասին եւ աշակերտներու ուսուցման համար մեծ թիւով թղթածրարներ, ինչպէս նաեւ հրեաներու Ողջակիզման եւ 20-րդ դարու այլ ցեղասպանութիւններու մասին աշխատութիւններ:

5. The Legacy Project  
[www.legacy-project.org](http://www.legacy-project.org)

«Փառանգաւանդութեան Ծրագիրը» (The Legacy Project) կը ներկայացնէ տեսողական եւ գրական արուեստի գործերու հաւաքածոյ մը՝ ստեղծագործուած 20-րդ դարուն մէջ պատահած ահաւոր գազանութիւններէ վերապրողներու շառաւիղներուն կողմէ: Հոն կան Հայկական Յեղասպանութեան, Ողջակիզման եւ Քամպուտիայի ցեղասպանութեան մասին խօսող տեսողական եւ գրական արուեստի գործեր:

6. Cobblestone »ձ Faces  
[www.cobblestonepub.com/resources/cob0005t.html](http://www.cobblestonepub.com/resources/cob0005t.html)  
[www.cobblestonepub.com/resources/fac9909t.html](http://www.cobblestonepub.com/resources/fac9909t.html)

Cobblestone եւ Faces գրքոյկները Cobblestone-ի արտադրութեամբ մանկական հրատարակութիւններ են: Հրատարակողները կը նպատակադրեն ներկայացնել այնպիսի աշխատանքներ, որոնք ոչ միայն հետաքրքրաշարժ ու հաճելի ընթերցանութիւններ են, այլ նաեւ պատմութեան, աշխարհի մշակոյթներու եւ ընկերային գիտութիւններու շուրջ յաւելեալ մանկավարժական աղբիւրներ:

Cobblestone եւ Faces կը ներկայացնէ ուսուցիչներու առցանց ուղեցոյցեր, որոնք կ'արծարծեն Յեղասպանութեան շարք մը առընչակից նիւթեր, ինչպէս մարդու անմարդկայնութիւնը մարդու հանդէպ, մշակոյթներու այլազանութիւնը, պատմական վերաքաղ-

ներ, եայլն:

Ներառեալ այստեղ կարելի է գտնել բոլոր կարգերու համար Հայկական Յեղասպանութիւն ուսուցանող ուսուցիչներու ուղեցոյցներ եւ դասածրագիրներ, ուր կան զանազան տեսակի դասարանային աշխատութիւններ, գրոյց յարուցող հարցումներ, թելադրուած դաշտագնացութիւններ եւ զանազան ցանցային կապեր աշակերտներու եւ ուսուցիչներու համար: Կայքէջը կը պարունակէ աշակերտական նախագիծերու (project) գաղափարներ՝ Հայկ. Յեղասպանութեան մասին:

Վերոյիշեալ երկու առցանց ուղեցոյցները մատչելի են ձրիօրէն այցելելու եւ վարբեռնելու (download):

7. “Teaching Tolerance” -The World Was Silent (no. 22 / Fall 2002)  
[www.tolerance.org/teach/magazine/features.jsp?p=0&is=30ar=323](http://www.tolerance.org/teach/magazine/features.jsp?p=0&is=30ar=323)

Հայկական Յեղասպանութեան ուսումնասիրութիւնը յիշողութեան եւ պատասխանատուութեան խնդրայարոյց հարցումներ կը յառաջացնէ:

Երբ աշակերտները լաւ կը ճանչնան միջազգային ընտանիքին կողմէ այնքան յաճախակիօրէն անտեսուած Հայկական Յեղասպանութեան մանրամասնութիւնները, անոնք կը սկսին խորհրդածել անոր բարոյական պատասխանատուութեան, ինքնութեան եւ ուրացումի մասին: Կարգ մը մանկավարժներ կը կարծեն թէ մենք մեր աշակերտներուն լաւապէս ծառայած չենք ըլլար, երբ կը փորձենք «հեռու պահել» զիրենք աշխարհի չորս կողմերը տեղի ունեցող այլ զարհուրելի ցեղասպանութիւններէ, որոնք այսքան մեծ վնաս կը հասցնեն մարդկութեան:

Այս կայքէջը հաւասարապէս կը հետաքրքրէ ուսուցիչներն ու աշակերտը եւ հոն կարելի է գտնել ուսուցման միջոցներ, խմբագրի ակնարկներ եւ արխիւային յօդուածներ:

8. Anne Frank Lessons in Educating for Human Rights  
(Մարդկային իրաւունքներ ուսուցանող Անն Ֆրանքի դասեր)

[fcit.usf.edu/HOLOCAUST/activity/68plan/afcntr1.htm](http://fcit.usf.edu/HOLOCAUST/activity/68plan/afcntr1.htm)

Այս կալքէջը պատրաստուած է Դոկտ. Ճոյս Աբսէլի կողմէ, Անն Ֆրանք կեդրոն, Միացեալ Նահանգներ:

Ճոյս Աբսէլ Յեղասպանութեան ուսումնասիրող, Նիւ եորքի համալսարանի ընդհանուր գիտութիւններու ծրագրի ուսուցչապետ, ինչպէս նաեւ իրաւանց աշխատանքներու վարիչ է: Ան նաեւ նախագահած է Յեղասպանութիւն Ուսումնասիրողներու Միջազգային կազմակերպութիւնը 2001-էն 2003:

Ուսուցման այս կեդրոնի 14-րդ բաժինը կ'առնչուի Հայկական Յեղասպանութեան: Հոն նախ հակիրճ պատմական մը կը տրուի, ապա կը խօսուի յիշողութեան եւ վերապրողներու վկայութեանց դերին մասին՝ զրոյցներ յառաջացնելով անպատժութեան շուրջ, թէ ինչպէս չարագործներու անպատիժ մնալը կը սատարէ ուրացման գործընթացին, եւ վերջապէս շեշտը կը դրուի թէ այս բոլորը ինչպէս կը հակազդեն պատմական թէ բարոյական ուսուցման վրայ:

Դոկտ. Աբսէլ կ'ըսէ. «20-րդ դարը թիրախ ընտրուած խումբերու անդամներուն դէմ ուղղուած Յեղասպանութեան դար եղած է: Ընդհանրապէս պատերազմը քողածածկոյթ եղած է Յեղասպանութեան, եւ հայերու դէմ տեղի ունեցած Յեղասպանութիւնը պատահած է Համաշխարհային Առաջին Պատերազմին»:

9. Հայկական Մանկավարժական Կեդրոն


The Armenian Education Center

[www.armenian-educationcenter.org](http://www.armenian-educationcenter.org)

Այս կայքէջը պատրաստուած է նեցուկ կանգնելու համար ԱՄՆ Վիրժինիա նահանգի դպրոցներուն մէջ Հայկական Յեղասպանութեան ուսուցման ծրագիրներուն: Անիկա ուղղուած է նահանգային դպրոցներու մէջ պատմութիւն եւ ընկերային գիտութիւններ դասաւանդող ուսուցիչներուն եւ կը պարունակէ օգտաշատ նիւթեր՝ ուսուցման իմաստով:

«ՀՄ»





ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՁԵՒԱՒՈՐՈՒԻ  
ԱՇԱԿԵՐՏԻՆ  
ՅԱՐԳԱՆՔԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՀԱՆԴԵՊ






Ուսուցիչին կողմէ ամենաշատ հարցուած հարցումներէն մէկն է, թէ «ի՞նչ պէտք է ընենք մեր աշակերտներուն, որպէսզի անոնք աւելի յարգալից ըլլան»: Շատ մը ուսուցիչներ կը գանգատին, թէ աշակերտներ «կը պատասխանեն», լաւ չեն պահեր իրենք զիրենք, կ'ըմբոստանան ուսուցիչի նուազագոյն ակնարկին թէ յանդիմանութեան համար:

Փրոֆ. Ճօ Մարթին՝ բազմաթիւ մրցանակներու արժանացած մանկավարժ, դասախօս, շարք մը մանկավարժական գիրքերու հեղինակ եւ մանկավարժական խորհրդատու, կ'ըսէ, թէ այսպիսի պարագաներու ուսուցիչի մը առաջին հարցումը պէտք է ըլլայ՝ «ի՞նչ ըրի ես, որպէս ուսուցիչ, շահելու համար աշակերտիս յարգանքը»:

Իրականութեան մէջ, ժամանակները փոխուած են: Անցած են այն օրերը, երբ ուսուցիչի մը ներկայութիւնն իսկ բաւարար էր, որ ան յարգանք պարտադրէ աշակերտներուն թէ ծնողներուն: Այսօր, ընկերութիւններու մէջ, ուր բարոյական սկզբունքները խախտու են, իսկ անձնակերպումը մարդոց ամենահիմնական նկարագրային գիծերէն մէկը, չենք կրնար մեր աշակերտները դաստիարակել եւ ուսուցանել այն ձեւերով, որոնք կը գործածուէին անցեալին: Յարգանքը ձեռք կը ձգուի դժուարութեամբ. պէտք է շահիլ զայն:

Ըստ Փրոֆ. Մարթինի, դասարանին մէջ աշակերտներուն յարգանքը շահելու լաւագոյն ձեւերէն մէկը այն է, որ մենք ըլլանք անձը, որուն մեր աշակերտը կ'ուզենք նմանի: Այսինքն դառնանք այն տիպարը, ուր մշակուած են այնպիսի արժանիքներ, զորս կ'ուզենք տեսնել մեր աշակերտներուն մօտ:

Մարդիկ պէտք ունին ունենալ այն, ինչ որ մենք ունինք որպէս ուսուցիչ: Չեմ խօսիր նիւթականի, դիրքի, հեղինակութեան մասին, այլ լաւ նկարագրի մասին: Նկարագիրը դրամով չի գնուիր, բայց ամէն մարդ կը հիանայ ու կը յարգէ նկարագրի տէր ուսուցիչը, նոյնիսկ եթէ անձնապէս յատուկ սէր չի տածեր այդ անձին հանդէպ: Յաջող ուսուցչութեան հիմնակէտերէն մէկը այս է, որը ինքնին ամենադժուար դասերէն մէկն է նորեկ ուսուցիչներու համար: Իրականութեան մէջ, առաջին անգամէն իսկ երբ ուսուցիչը դասարան




մուտք կը գործէ, աշակերտները «վերէն վար» կը չափեն զինք, որոշելու համար թէ ինչպէս պիտի վարուին անոր հետ: Առաջին հարցումը, զոր աշակերտը իր մտքին մէջ կ'ունենայ երբ տեսնէ նոր ուսուցիչ մը՝ «Ո՛վ է»ն է: Պատասխանը անոր անուն մականունէն անդին կ'անցնի: «Ով ըլլալը» կ'որոշէ թէ որքան յարգանք պիտի կարենայ շահիլ ան: Թէ «ո՛վ ես», աշակերտին համար, գործածած բառերէն շատ աւելին կը խօսի: Ինչպէս կը քալես, կը նայիս, կը կանգնիս, կը հագուիս, կը խօսիս, կը պատասխանես, նոյնիսկ՝ ինչպէս կը հոտիս՝ երբ դասարան մտնես. ահաւասիկ ասոնք են, որ պիտի որոշեն թէ՛ «կ'ուզենք քեզ» կամ «այս մէկը տարբեր է»:

Կեցուածքդ պիտի վճռէ, թէ դուն որքանով կրնաս աշակերտին ուշադրութիւնը գրաւել՝ որ ան լսէ քեզի. երբ աշակերտը զգայ, թէ դուն ինքդ չես յարգեր դուն քեզ, ան պիտի եզրակացնէ, թէ ինքն ալ պատրաստ չէ քեզ յարգելու:

Յաջորդ երկու հարցումները, զորս աշակերտները կը հարցնեն՝ որոշելու թէ պիտի յարգեն քեզ կամ ոչ՝ «ինչո՞ւ կարելոր է քու սորվեցուցածդ» եւ «իրապէս կը հաւատան դուն քու ըսածիդ»: Վերոյիշեալ հարցումները հիմնական են վստահութեան ներշնչման մեր աշխատանքին մէջ:

Երբ այս երեք հարցումներուն պատասխանները յստակօրէն, վստահութեամբ եւ ուղղակիօրէն փոխանցուին, ապա ուսուցիչի յարգանքն ու հռչակը մեծապէս կ'օգտուին. երբ կ'ուսուցանենք խանդով եւ կը հաւատանք մեր աշխատանքին՝ վստահութիւն եւ յարգանք շահիլը այնքան ալ դժուար չըլլար:

Ե.Թ.Գ.



Աննա Քելեան

## ԴՊՐՈՑ. ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Երիտասարդ մանկավարժի դիտանկիւնէն

*Աննա Քելեան, թարգմանիչ եւ ուսուցիչ, Մանկավարժութեան  
ծիղիւն մէջ ունի Բարձրագոյն Արհեստագէտի վկայական (T.S. in  
Education)*



Երիտասարդ մանկավարժի դիտանկիւնէն

ԱԶԱՏ եմ Դպրոցէն Ներս  
Ունիմ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ  
Իսկ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ Եմ Որու՞ Հանդէպ  
Դպրոցը ինծի համար՝  
Բանտ է՞ թէ Խաղավայր

«Բարի լոյս. Ինչպէ՞ս էք այսօր:  
Յուսամ յաջորդ անգամ ոտքի կ'ելլէք երբ ներս գամ»:

«Յասմիկ՝ այս ի՞նչ տակնուվրայութիւն է: Իսկ գիրդ՝ բոլորովին  
անհասկնալի»:

«Արա՛ կարմիր մելան չունի՞ս»:

Այս պատկերը սովորական դասարանի մը օրինակն է:  
Արդեօ՞ք: Անշուշտ՝ ծանօթ եւ ընդունուած վիճակ մըն է:  
Լաւ, պահ մը ենթադրենք թէ այս խօսքը արտասանած է դպրոցի տնօրէն՝ Պարոն Սիմոնը, եւ թէ Օրիորդ Յասմիկն ու Պարոն Արան ուսուցիչներ են այս դպրոցէն ներս. պիտի չհաւատաք, այդպէս չէ՞: «Աներեւակայելի է», պիտի ըսէք, վստահօրէն: Բայց եկէք շարուկանենք ենթադրել, թէ դէպքը իսկապէս պատահած է ուսուցչարանէն ներս: Արդեօք կարելի՞ է դուք ձեզ երեւակայել այս կացութեան մէջ՝

Օրիորդ Յասմիկ՝  
«Պարոն Սիմոն, կրնամ ուսուցչարանէն կաւիճ մը առնել»:

Պարոն Սիմոն՝  
«Պարոն Արա, պէ՞տք է յիշեցնեմ թէ գրաւորները կարմիր մելանով պէտք է սրբագրուին: Յաջորդ զբօսանքին կը նստիս եւ հարիւր անգամ կը գրես՝ ԳՐԱԻՈՐՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԳՐԻՉՈՎ ՊԻՏԻ ՍՐԲԱԳՐԵՄ»:

«Բոլորդ լսեցէք՝ այս դպրոցէն ներս չկան ծոյլ, անկազմակերպ ուսուցիչներ: Ասկէ ետք բոլորդ ալ ձեր ԿՈԿԻԿ դասածրագրերը կը յանձնէք ձիշդ ժամանակին: Լսեցի՞ր Օրիորդ Յասմիկ»:

Ա՛խ ի՞նչ դժուար բան է հրաման առնել ուրիշ չափահաս անձէ մը. կամ պատժուիլ, որովհետեւ կարմիր մելանդ մոոցած ես եւ ստիպուած կանաչով սրբագրած գրաւորները: Չէ՛, այդ բացարձակ անընդունելի է: Հապա յանդիմանուիլ գործակից ուսուցիչներուն դիմաց՝ անուրանալիօրէն անարգական եւ վիրատրիչ է:

Վստահ պիտի չընդունիք այդպիսի վարմունք ձեր հանդէպ: Լաւ, ինչո՞ւ այդպէս վարուիք ձեր աշակերտներուն հետ: Ուրեմն, միշտ յիշենք ոսկեղէն օրէնքը՝ ամէն ինչ, որ կ'ուզես ուրիշը ընէ քեզի, դուն ալ անոր նոյնը ըրէ: Միշտ մենք զմեզ ուրիշին տեղը դնենք եւ մտածենք՝ «Արդեօք մենք ի՞նչ պիտի ընենք այդպիսի պարագայի մը»:

**Դպրոցը բանտ չէ՝ պէտք չէ բոլորովին կաշկանդել ո՛չ ուսուցիչը, ո՛չ ալ աշակերտը: Բայց եւ այնպէս, դպրոցը խաղավայր ալ չէ, ուր կ'իշխեն իրարանցումն ու տակնուվրայութիւնը:**

Աշակերտուի Փաթիլ՝  
«Օրիորդ Յասմիկ, շատ անօթի եմ»:

Օրիորդ Յասմիկ կը մտածէ՝  
Արդեօք ի՞նչ պիտի ընեմ ես եթէ Փաթիլին տեղը ըլլայի: Վստահ պիտի ուզէի պատահո մը բան ուտել. այլապէս պիտի չկարենայի կեդրոնանալ: Ուրեմն պէտք է թոյլ տամ Փաթիլին որ բան մը ուտէ:

Նոյնպէս ալ Պարոն Սիմոնը պիտի մտածէ՝  
Օրիորդ Յասմիկ վկայեալ ուսուցչուի է: Ինձմէ լաւ գիտէ թուաբանութիւն դասաւանդելու ձեւերը եւ ան աւելի լաւ կը ծանչնայ իր աշակերտները: Ուրեմն պէտք է վստահիմ անոր:

Բայց պէտք է այսպիսի «ազատութիւն»՝ այսպիսի իրաւասութիւններ տալ մանաւանդ աշակերտներուն: Ինչպէս պիտի կառավարենք դասարանը այդ պարագային: Նոյնպէս ուսուցչին՝ Օրիորդ Յասմիկին ինչպէս պիտի վստահի Պարոն Սիմոնը երբ գիտէ անոր «քծախնդրութիւնը»:

«Որքան ատեն որ ուրիշներուն իշխանութեան տակ ենք, պիտի մեղադրենք զիրենք մեր սխալներուն համար. եւ մեր պատասխանատուութեան զգացումը պիտի մնայ տկար: ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԷ. եւ մեր [կեանքի] փորձառութիւնը [կրնանք ճոխացնել] միայն [երբ ընդունինք] այս պատասխանատուութիւնները»:  
Կանայի նախկին նախագահ  
Քուամէյ Նքրումա

Ուրեմն պէտք է թոյլ տանք աշակերտին ապրի իր փորձառութիւնները եւ սորվի իր անձնական յաջողութիւններէն եւ ձախողութիւններէն, մինչ մենք կ'ուղղենք իր աշխատողին եւ կ'արթնցնենք անոր պատասխանատուութեան զգացումը իր վարմունքին ու աշխատանքի արդիւնքին հանդէպ:

Օրիորդ Յասմիկ, խօսքը ուղղելով դասարանին՝  
«Փաթիլը այսօր մոռցեր է նախաձաշ ընել եւ այդ պատճառաւ ալ ան անօթի կը զգայ հիմա. երբ անօթի ըլլանք չենք կրնար կեդրոնանալ մեր դասին, աշխատանքին եւ նոյնիսկ խաղին վրայ, այդպէս չէ՞: Ուրեմն՝ բոլորդ միշտ յիշեցէք նախաձաշ ընել, որպէսզի առաջին պահերուն կրնաք դասին հետեւիլ. եւ ամպայման հետերնիդ պաշար բերէք զքօսանքներուն ուտելու, որպէսզի ամբողջ օրը կայտառ ըլլաք եւ կեդրոնանաք ձեր դասին: Լաւ, Փաթիլ, հիմա կրնաս ուտել»:



Եւ նախքան դասի անցնի, Օրիորդ Յասմիկը իր նոթատետրին մէջ կ'արձանագրէ հետեւեալը՝

*Տնօրէնը տեղեակ պահել «նախաձաշի» դէպքով.*

*Առաջարկել տնօրէնութեան՝ ծնողներու յանձնարարել իրենց զաւակները դպրոց չղրկեն առանց նախաձաշի եւ առանց պաշարի:*

Նոյնպէս ալ տնօրէնութիւնը պէտք է իրաւասութիւններ շնորհէ ուսուցչին, որպէսզի ան իր կարգին մասնակցութիւնը բերէ իր դասանիւթի ծրագրման եւ իր ուսումն ու փորձառութիւնը օգտագործէ իր դասաւանդութեան մէջ: Բայց նոյն ատեն ուսուցիչը պէտք է ըլլայ պատասխանատու:

Պարոն Սիմոն, խօսքը ուղղելով Օրիորդ Յասմիկին՝

*«Օրիորդ Յասմիկ՝ ահա այս տարուայ թուաբանութեան ծրագիրը եւ ասոնք ալ դասագրքերն են. պիտի տրամադրենք նաեւ ուսուցչի ուղեցոյցերը, սակայն բնաւ սահմանափակուած չէք առաջարկուած մեթոտներով. Ընդհակառակը՝ կը նախընտրուի ձեր ուսումնասիրութիւնները կատարէք երբ պիտի պատրաստէք ձեր դասածրագրերը: Օգտագործեցէք ձեր ուսումը, փորձառութիւնը, դասանիւթերու գիտութիւնը եւ ձեր աշակերտներուն կարողութիւններու եւ հետաքրքրութիւններու ճանաչումը:*

*Միայն մէկ խնդրանք, Օրիորդ Յասմիկ՝ դասածրագրերը կ'ուզեմ կոկիկ պատրաստուած տեսնել ամէն ամսասկիզբի նախորդող երկուշաբթի օրը: Նաեւ կը նախընտրուի տառագրէք զանոնք»:*

Անշուշտ այս Օրիորդ Յասմիկի եւ Պարոն Սիմոնի մօտեցումներն են այս հարցերուն. սակայն իւրաքանչիւր ուսուցիչ եւ իւրաքանչիւր դպրոց իր տնօրէնութեամբ պիտի ունենայ տարբեր անդրադարձ եւ իրենց միջավայրին յարմարող մօտեցում որեւէ մէկ դպրոցական հարցի: Չկայ ձիշդ կամ սխալ մօտեցում. այլ՝ յարմար կամ անյարմար ոճ:

Դրական ակնկալութիւններ մեր ուսուցիչներէն եւ աշակերտներէն

րէն անպայմանօրէն պիտի յայտնաբերեն սորվեցնելու (Teaching) եւ սորվելու(Learning) հաստատուն եւ ձկուն մօտեցումներ, որոնց միջոցաւ է, որ պիտի կարենանք հաւասարակշռուած միջավայր մը դարձնել դպրոցը:

**Ազատութիւն առանց կարգապահութեան  
անիշխանութիւն է. կարգապահութիւն  
առանց ազատութեան բռնապետութիւն է:**

*Թանգանիոյ նախկին նախագահ  
Ճուլիըս Քամպարակը Նիերէրէ*

**Պատասխանատու եմ՝  
սակայն որո՞ւ հանդէպ**

Պատասխանատու եմ իմ արարքներու  
Պատասխանատու եմ ես իմ խօսքերու  
Պատասխանատու եմ՝ բայց որո՞ւ հանդէպ.

Որո՞ւ պիտի տամ ես իմ պատասխան  
Երբ արարքներս փոխեն իրենց ծամբան.  
Որո՞ւ պիտի փորձեմ համոզել  
Թէ այս արարքը չի հասցներ վնաս  
Թէ այս խօսքերը ունին բարի իմաստ.

Որո՞ւ պիտի խաբեմ եթէ ոչ ես ինձ  
Քանի արարքներս զիս պիտի տանջեն  
Եթէ ուրիշին վնաս հասցնեն  
Իսկ իմ խօսքերը պիտի չարձակուին բերնէս  
առանց նախապէս անցնելու սրտէս.

Պատասխանատու եմ իմ արարքներու  
Պատասխանատու եմ ես իմ խօսքերու  
Պատասխանատու եմ միայն իմ հանդէպ  
Ոչ մէկ անձ պիտի կրէ իմ վրէպ:

Պատասխանատու եւ Պատասխանատուութիւն բառերու գործածութիւնը մեր լեզուի մէջ հեռացած են իրենց իսկական իմաստէն. մինչ պատասխանատու բառին իմաստը շատ յստակ է:

«Պատասխան տալ» չի նշանակեր «ծայն բարձրացնել» կամ «անարգել»:

Երբ ուրիշին տամ պատասխանս՝ ԱՅՈ. բայց երբ «պատասխանատու եմ միայն իմ հանդէպ»՝

**ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ ԵՄ.** վերատեսութեան կ'ենթարկեմ իմ արարքներս ու խօսքերս մատնանշելով սխալներս եւ սրբագրելով զանոնք կանխաւ կամ յաջորդին:

**ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐՍ ԵՆ.** այն արարքները որոնք կը ստանձնեմ, պատասխանատու մօտեցումով կը կատարեմ եւ որոնց իրագործմամբ կը զարգանամ եւ կը յառաջդիմեմ:

Պատասխանատուութիւնը կարելոր է մարդու անձնական զարգացման համար. այն անձը, որ պատասխանատու է իր արարքներուն՝ յանձնարարուած թէ ինքնասահման, միայն այն է, որ կը յառաջդիմէ: Ո՞վ չ'ուզեր յառաջդիմել, ըլլալ լաւագոյնը, գնահատուիլ... լաւ, ուրեմն, ըլլանք պատասխանատու մենք մեր հանդէպ:

Անշուշտ չենք ուզեր մեր աշակերտները մեզի «պատասխան տան». լաւ, ինչո՞ւ պատասխան կը պահանջենք անոնցմէ: Ուրեմն նոյնպէս վարժեցնենք աշակերտը ըլլայ պատասխանատու ինքն իր հանդէպ: Պատասխանատու աշակերտը ջանք կը թափէ մասնակցելու դպրոցի շրջապատէն ներս տրամադրուած կրթական եւ ընկերային առիթներուն եւ կը փորձէ լաւագոյն ձեւով օգտուիլ անոնցմէ: Ուրեմն օգնենք անոր ծանօթանայ պատասխանատուութեան ու անոր կարելորութեան. սակայն չպարտադրենք զայն. պարտադրուածը՝ պարտականութիւն է եւ մարդ չի սիրեր պարտականութիւնը՝ նոյնիսկ չափահասը: Եւ արդէն պարտականութենէն բան չենք սորվիր, որովհետեւ «ընեմ վերջացնեմ» կեցուածքով

կը մօտենանք անոր:

Մինչ պատասխանատու անձին կը վստահինք եւ անկէ կ'ակընկալենք լաւագոյն կատարելագործում անպատասխանատու անձը կը ծանչնանք իր գործէն եւ յաջորդին անոր ուրիշ գործ չենք վստահիր:

«Դիւրին է խուսափիլ մեր պատասխանատուութիւններէն. բայց չենք կրնար փախուստ տալ անոնցմէ (մեր պատասխանատուութիւններէն) խուսափելու հետեւանքներէն»

*Պարոն Ովսեայ Սթամբ*

Այն ծնողքը, որ իր զակին չի վստահիր, կը նշանակէ ինքն իր դաստիարակութեան հաւատք չունի: Նոյնպէս ուսուցիչը՝ երբ աշակերտներուն արդիւնքէն գոհ չէ, ուրեմն լաւ ուսուցիչ չէ: Իսկ անպատասխանատու աշակերտը ինքն է, որ կը ձախողի: Ուրիշը մեղադրելը շատ դիւրին է սակայն ո՛չ մեղադրողին օգտակար է ո՛չ ալ մեղադրողին: Պատասխանատու անձը կ'ընդունի թէ յանցանքը կամ սխալը իրմէ է եւ կը ջանայ սրբագրել զայն: Այս է ինքնաբոլիս պատասխանատուութիւնը:

### **Տուր ինձ իրաւասութիւններս Սորվեցուր ինձ ըլլամ պատասխանատու**

Դասապահին կէսէն աւելին կը տրամադրուի դասէն զատ այլ աշխատանքներու. այս կորսուած ժամանակի մեծ մասը կը գողնան կարգապահական հարցերը:

Իրաւասութիւններով եւ պատասխանատուութիւններով հաւասարակշռուած դասարանը եւ դասամթոլորտի կառոյցը լայն կը բանան դռները փոխադարձ յարգանքի, դրական կեցուածքներու եւ աւելի հաւասարակշռուած միջավայրերու:

**«Ազատ եմ, որովհետեւ գիտեմ թէ  
ես եմ միակ պատասխանատուն  
այն բոլոր արարքներուն, որ ես կը գործեմ»  
Ռոպերթ Ա. Հայնլայն**

Սակայն աշակերտին պատասխանատուութիւնը բնածին չէ. այլ՝ պէտք է զայն սնուցանենք, խնամենք, քաջալերենք, ապա ակնկալենք: Իսկ անոր իրաւասութիւնները պիտի քաղենք անոր անձնական պէտքերէն եւ զանոնք մէկ առ մէկ պիտի ծանօթացնենք աշակերտին, որպէսզի ան սորվի ազատ ըլլալ, սորվի յարգել իր եւ ուրիշին ազատութիւնը, եւ լաւագոյն ձեւով օգտագործել իր սեփական իրաւասութիւնները:

Իսկ իբր ուսուցիչներ՝ պէտք է ճանչնաք մեր սեփական իրաւունքները, պահանջենք անոնց համապատասխան իրաւասութիւններ եւ պատասխանատուութեամբ մօտենանք մեզի յանձնարարուած գործերուն. որովհետեւ նախ մենք ենք օգտուողները եւ անշուշտ նոյն ատեն կ'օգտուին աշակերտները եւ ի վերջոյ դպրոցը:

## Բովանդակություն

- 5 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
- 7 ՄԱՆՈՒԿ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ  
Շաղիկ Խիտավերտեան
- 13 ԲՈՒՆԱԴԱՏՈՒՄԸ  
Վերա Սիսեռեան
- 25 ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՃԻՇԴ ՈՒՂԻՈՎ  
Գոհար Գանտահարեան
- 33 ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԵՐՈՒՆ  
Գայանէ Թադեոսեան
- 39 «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ՆԻԹԸ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ  
ԱՂԲԻՐՆԵՐ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ
- 47 ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՁԵԻԱԻՈՐՈՒԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ ՅԱՐԳԱՆՔԸ՝  
ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՀԱՆԴԷՊ  
Ե.Թ.Գ.
- 51 ԴՊՐՈՑ. ԻՐԱԻԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ  
ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ  
Աննա Քելեան



**“The Armenian Educator”**

A tri-monthly journal of education and pedagogy

*“The Armenian Educator” (Hay Mangavarj) is devoted to the improvement of education and the professional development of educators in Armenian schools worldwide. The journal, published tri-monthly in Armenian, is a resource for teaching and learning and provides an opportunity for research publication, information about developments of significance to educators, and commentary on issues of concern to the Armenian educational community worldwide.*

**By the Order of**

His Beatitude Nerses Bedros XIX

Catholicos Patriarch of Cilicia of Armenian Catholics

**Editor in Chief**

Father Vartan Kazanjian

**Associate Editor**

Eva Koressian

**Director**

Vartan Tashjian

**Published by**

Office of Armenology Curriculum Development

“Saint Krikor Naregatsi” Center

Armenian Catholic Patriarchate

2078-5605 Geitawi Beirut-Lebanon

Tel: + 961 1 570559

Fax: 961 1 570562

Email: [nareg@armeniancatholic.org](mailto:nareg@armeniancatholic.org)

[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)



Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակը Պէյրուօի մէջ հաստատուած կրթագիտական-հետազօտական եւ արտադրական հիմնարկ մըն է, հիմնադրուած հրամանովը եւ օրհնութեամբը Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին:

### Հիմնարկը կը նպատակադրէ

1. Հայկական սփիւոքին մէջ ստեղծել հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման հայեցակարգ,

2. Սփիւոքի հայկական վարժարաններուն համար ստեղծել հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման կրթական ծրագիրներ,

3. Պատրաստել հայերէն լեզուի եւ հայագիտական այլ դասանիւթերու ուսուցման դասագիրքեր եւ ուսուցողական այլ նիւթեր ու միջոցներ,

4. Պատրաստել դասագիրքերու եւ ուսուցողական այլ նիւթերու եւ միջոցներու օգտագործման մասին ուղեցոյցներ՝ ուսուցիչներու եւ ծնողներու համար,

5. Վերապատրաստել հայերէն լեզուի եւ հայագիտական այլ դասանիւթերու ուսուցիչներ ըստ հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման հայեցակարգի, կրթական ծրագիրներու եւ դասագիրքերու եւ ուսուցողական այլ նիւթերու ու միջոցներու պահանջներուն,

6. Պատրաստել հայերէն լեզուի եւ հայագիտական այլ նիւթերու ուսուցման օժանդակող արտադասարանային աշխատանքներու ուղեցոյցներ,

7. Կազմակերպել հայ մանուկներու եւ պատանիներու հայագիտական զարգացման ուղղուած զանազան ձեռնարկներ:

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակը կը պատասխանէ Հայկական սփիւոքի կրթական կարիքներուն եւ զարգացման մարտահրաւերին:

